



Caucasus
Talks

Caucasus Talks Manifesto 2020

Բովանդակություն

Մանիֆեստ	2
Տնտեսական անհավասարություն	2
Էկոլոգիա	3
Մարդու իրավունքներ	3
Էթնիկ ազգայնականություն	4
Աշխարհաբաղաբական ինտրիզներ	5
Մշակութային ժառանգության պահպանություն	5
Հարակից տարածաշրջանները	6
Դիալոգի սկզբունքները	6
Չկա մեկը որ գիտի ամեն ինչ	6
Խոսե՞լ, թե չխոսե՞լ	6
Լսել դիմացինին	6
Դելիբերատիվ ժողովրդավարություն	7
Մեր տեսլականը	8

Մանիֆեստ

Տասնամյակներ են ինչ Հարավային Կովկասը կառավարվում է երեք պետությունների կողմից (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան): Տարածաշրջանը կազմավորող երեք պետությունները տարածաշրջանային համագործակցության աղբատ պատմություն ունեն: Ազգ-պետության ներկա մոդելը միջպետական ու ներպետական պատերազմներն ու կոնֆլիկտները թույլ չեն տալիս տարածաշրջանի հասարակություններին համագործակցային մթնոլորտում լուծել ընդհանուր խնդիրները: Հարավային Կովկասի հասարակությունների քաղաքական, սոցիալական ու տնտեսական խնդիրները ընդհանուր պատմության, աշխարհագրական խնդիրների արդյունք են ու տրամաբանական է, որ դրանք հնարավոր է լուծել համատեղ աշխատանքի արդյունքում, և ոչ սահմանափակ ու կոշտ ավանդական պետության մոդելի ներքում, որը շարունակ ապացուցում է իր անարդյունավետությունը տարածաշրջանային խնդիրները լուծելու համար, և որի հետևանքներից մեկն էլ կոնֆլիկտներն են, որոնց ավարտը չի նշմարվում:

Մենք հավատում ենք որ միայն տեղեկացված ու բաց քննարկման արդյունքում է հնարավոր լուծել երեք հասարակությունների առջև ծառայած խնդիրները: CaucasusTalks-ի (Թարգմ. Կովկասյան Չրոյցներ) առաջնային նպատակն է հանդես գալ հարթակով նրանց համար ովքեր հետաքրքրված են Հարավային Կովկասի, որպես մի միավորի ու դրա հարակից տարածաշրջաններին վերաբերող խնդիրներով ու ցանկություն ունեն ներգրավվելու բաց քննարկման մեջ: Մեր հարթակը կմիավորի տարածաշրջանի ակտիվիստներին, լրագրողներին, հետազոտողներին և այլ մասնագետների շարունակական դիալոգի մեջ ներգրավվելու համար: Մեր ձգտումն է հատկապես ներգրավել երիտասարդների, ովքեր ձևավորելու են տարածաշրջանի ապագան: Այսպիսով, մեր նպատակներից է նաև երիտասարդ մասնագետների սերունդներին իրար հետ ծանոթացնելը, քանի-որ բազմաթիվ տարիներ նրանք զրկված են եղել հաղորդակցությունից: Ժամանակ առ ժամանակ մենք կներգրավվենք մեր քննարկումներում նախորդ սերունդների մասնագետներին՝ սերունդների միջև փորձի փոխանակում ու երկխոսություն ծավալելու համար:

Ստորև այն հիմնական թեմաներն են, որոնք մենք կարևոր ենք գտնում Հարավային Կովկասի համատեքստում քննարկելու համար:

Տնտեսական անհավասարություն

Աղբատությունն ու տնտեսական անհավասարությունները տարածված են ամբողջ աշխարհի հասարակություններում: Այս առումով Հարավային Կովկասի հասարակությունները կիսում են նման պատմություն. տարածաշրջանը անցել է սովետական տնտեսական ռեֆորմների միջով, հապշտապ տնտեսական ազատականացման շոկի միջով: Սովետական միության կենտրոնացված տնտեսական կառավարման միջով անցնելուց հետո քրեաօլիգարխիկ ֆակտորները ուզուրպացրեցին քաղաքական լծակները՝ ի շահ իրենք կապիտալի, ոմանք էլ ներգրավվեցին սպեկուլատիվ «րոբինհուդիզմի» մեջ: Տնտեսապես, քաղաք-գյուղ բաժանարարը այս հասարակություններում խիստ է և վնասակար կարծրատիպերը գյուղականության նկատմամբ կարծրացնում են այդ բաժանումը: Աղբատության մակարդակը

տարածաշրջանում բարձր է, իսկ հարստությունը կուտակված է մի քանի գրպաններում: Կոռուպցիան ու հովանավորչությունը, քրեաօլիգարխիկ ռեժիմի կողմից քաղաքական դաշտի կառավարումը, անարդյունավետ տնտեսական քաղաքականությունը, ինչպես նաև աշխատողների իրավունքների նկատմամբ անուշադրությունը, հատկապես մասնավոր սեկտորում, այն հիմնական ցայտուն խնդիրներն են, որ գրավում են տարածաշրջանի քաղաքացիական ակտիվությունների ուշադրությունը և հանգեցնում քրեական գործերի ու քաղաքացիական շարժումների: CaucasusTalks-ը բաց է քննարկելու ցանկացած տնտեսական խնդիր, որ առկա է ինչպես պետական այնպես էլ մասնավոր հատվածում:

Էկոլոգիա

Վերջին տասնամյակներում Հարավային Կովկասի հասարակությունները կանգնում են շարունակաբար ահազնացող էկոլոգիական խնդիրների առջև, որոնցից շատերը տարածաշրջանային բնույթ են կրում և համագործակցային լուծումների կարիք ունեն: Տարածաշրջանի էկոլոգիական խնդիրները ներառում են հանքերով և հիդրոէլեկտրակայաններով պայմանավորված աղտոտում, անտառհատություն, մարդկային գործունեությամբ պայմանավորված կենսաբազմազանության պակասում և այլ բազմաթիվ խնդիրներ: Ակտիվիստները շարունակաբար փորձում են փոխել իրենց կառավարությունների սխալ քաղաքականության արդյունքում գոյացած էկոլոգիական խնդիրները: Չնայած նրանք հասել են նկատելի հաջողությունների, սակայն կառավարությունները շարունակում են անտեսել ահազնացող էկոլոգիական խնդիրները և խուսափել բանապահպանների հետ համագործակցությունից: Մեր հարթակը բաց է այն մասնագետների համար ովքեր հետաքրքրված են ու ներգրավված էկոլոգիական խնդիրներով և ցանկություն ունեն արտահայտելու իրենց կարծիքը: Այս հարթակում էկոլոգիական ակտիվիստները կարող են ծանոթանալ իրար հետ ինչպես նաև հարևան հասարակություններ առջև ծառայած էկոլոգիական խնդիրների հետ, որոնք հաճախ տարածաշրջանային ազդեցություն ունեն:

Մենք նախընտրել ենք օգտագործել էկոլոգիա եզրույթը շրջակա միջավայր եզրույթի փոխարեն, կենդանական օրգանիզմների (ներառյալ մարդկանց) միջև առկա սերտ կապն ու կախվածությունը ընդգծելու համար: Շրջակա միջավայր եզրույթը ենթադրում է մի համատեքստ որտեղ մարդը անջատ է բնությունից ու ուսումնասիրում է իր շրջապատը հաճախ տիրելու ու շահագործելու նպատակով. սա մի հարաբերությունների դինամիկա է, որը մենք մերժում ենք:

Մարդու իրավունքներ

1991 թվականից առ այսօր Հարավային Կովկասի ինքնիշխան պետությունները ստորագրել են բազմաթիվ կոնվենցիաներ, համագործակցել մարդու իրավունքներով զբաղվող բազմաթիվ միջազգային կազմակերպությունների հետ: Այս բոլոր գործընթացներն ու ստորագրված փաստաթղթերը տարածաշրջանում մարդու իրավունքների իրավիճակի բարելավման հույս էին ներշնչում, բայց ջանքերից քչերն են արդյունք տվել: Չնայած ամեն հասարակությունում մարդու իրավունքների խախտումները տարբեր հաճախականության ու տեսակի են, դրանք ամենուրեք համակարգային բնույթ ունեն: Ի հավելումս, մարդու իրավունքների իրավիճակը հատկապես զգայուն են տարածաշրջանի չճանչված հանրապետություններում՝ հաշվի

առնելով որ դրանք չունեն միջազգային ճանաչում և չունեն ձայնի իրավունք միջազգային հարթակներում: Մարդու իրավունքները Հարավային Կովկասում քննարկվում ու պաշտպանվում են քաղաքական ամենակարևոր ամբիոններից, ակադեմիական և ակտիվիստական շրջանակներում, բայց դրանք շարունակում են մնալ անհասանելի հասարակության մնացած անդամների համար, որոնք չունեն բավական գիտելիք իրենց իրավունքների մասին, հետևաբար և չունեն դրանք իրացնելու հնարավորություն:

Մեր հետաքրքրության շրջանակում են մասնավորապես՝

- Կանանց իրավունքները
- Աշխատավորների իրավունքները
- LQFSՔ+ իրավունքները
- Հաշմանդամություն ունեցողների իրավունքները
- Երեխաների իրավունքները
- Էթնիկ փոքրամասնությունների իրավունքները

Էթնիկ ազգայնականություն

Այսպես կոչված ազգային գիտակցությունը որը ձևավորել է Հարավային Կովկասի երեք էթնիկ խմբերի՝ հայերի, ադրբեջանցիների ու վրացիների շրջանում, քսաներորդ դարի սկզբում հանգեցրել է էթնիկության վրա հիմնված երեք պետությունների ձևավորմանը: Այդ ժամանակից ի վեր պետությունների կառավարությունները, դպրոցները, բանակերը և այլ ինստիտուտներ անցել են ազգայնականացման միջով: Այս գործընթացը հանգեցրել է ազգային սահմանների ինչպես նաև ազգային ինքնությունների կարծրացման Հարավային Կովկասում, ու զգացողության թե՛ ամեն հասարակություն յուրահատուկ է, միայնակ ու մրցակցության մեջ ընդդեմ տարածաշրջանի մյուս հասարակությունների:

Վերը նշվածի նշաններից մեկը հասարակության միլիտարիզացման և շարունակ ավելացող ռազմական ծախսերն են: Մենք հավատում ենք, որ իրական անվտանգությունը հնարավոր է ձեռք բերել դիալոգի ու համագործակցության միջոցով՝ մեր ընդհանուր խնդիրները բաց քննարկելու ու միմյանց մտահոգությունները հաշվի առնելու միջոցով, և ոչ թե՛ կենտրոնանալով միայն մեր տրավմաների վրա: Սա պահանջում է անվտանգության ու պատմության ընկալման մոտեցման փոփոխության, որը մինչ այժմ առաջնորդվում է ազգային տրավմաների ու պայթարների նեղ ազգայնական տեսանկյունից: Մեր հարթակի նպատակներից մեկն էլ նման էթնիկ-ազգայնական գաղափարախոսության միջերի վերլուծությունն ու քննադատությունն է, որ կխրախուսի երիտասարդ մարդկանց ավելի մանրակրկիտ ու քննադատորեն ուսումնասիրել էթնիկ ինքնությունները ու պատմության ընկալումները, որը ամենևին պարտադիր չէ որ լինի ազգայնական: Մենք հույս ունենք, որ մեր քննարկումները թույլ կտան վերականգնել ու համահեղինակել նարրատիվներ մեր համայնքների ու համագործակցությունների մասին, որոնք վեր կլինեն էթնիկ/ազգայնական նկարագրերից:

Աշխարհաքաղաքական ինտրիգներ

Դարերով Հարավային Կովկասը պարփակված է եղել իր հյուսիսում, հարավում և արևմուտքում գտնվող կայսրությունների միջև: Հարավային Կովկասը երբեք չի կորցրել մարտավարական կարևորությունը իր հարևանների համար: Վերջին տարիներում տարածաշրջանի վրա հիմնական քաղաքական, տնտեսական ու սոցիալական ազդեցության բևեռներն են Ռուսաստանը, Թուրքիան ու որոշ չափով Իրանը: Մենք հետաքրքրված ենք մանրագլին քննարկել այս գերտերությունների ազդեցությունը տարածաշրջանի վրա: Մենք նաև ուշադրություն կսևեռենք ԱՄՆ-ի ԵՄ-ի, Չինաստանի և այլ ուժերի Հարավային Կովկասի հետ կապված աշխարհաքաղաքական հետաքրքրություններին: Միջազգային հարաբերությունների ավանդական մոդելի մեջ, Հարավային Կովկասի պետությունները շատ ընտրություն չունեն, բայց փորձել ներգրավվել աշխարհաքաղաքական համագործակցության մեջ, որը կսպասարկի իրենց պետական շահերը: Ցավոք, նման աշխարհաքաղաքական ընտրությունները հաճախ տեղի են ունենում տարածաշրջանային հնարավոր համագործակցության գնով: Մեր նպատակն է քննարկել տարածաշրջանային պետական համագործակցությունների այն ձևերը, որոնք չեն հանգեցնի այլ աշխարհաքաղաքական բացասական հետևանքների:

Մշակութային ժառանգության պահպանություն

Քսաներորդ դարից սկսած իշխանության եկող տարբեր ուժերի կողմից Հարավային Կովկասի բազմատեսակ ու բազմաշերտ մշակութային ժառանգությունը ենթարկվել է հարձակումների ու ոչնչացման: Սովետական միության սոցիալիստական ռեալիզմի մոտեցումը նպատակ ուներ քնջելու պատմական հիշողությունն ու մշակութային կոթողները, որոնք որևէ կերպ չէին համապատասխանում սովետական Ելիտայի գաղափարաբանական պատկերացումներին: Այնուհետև կապիտալիստական կարգը հանգեցրեց մշակույթի կոմերցիալիզացիային: Սպառողականության ագրեսիվ աճը ստիպում է մշակույթին ու արվեստին նույնպես ենթարկվել շուկայի ու մասսայական պահանջի հրամայականներին: Քաղաքական հակամարտությունները տարածաշրջանի պետությունների միջև իրենց դրսևորումն են ստանում նաև “այլ” հասարակություններին պատկանող մշակութային ժառանգության ոչնչացմամբ: Մենք գնահատում ենք մշակութային ժառանգության ինչպես նաև արտիստիկ արտահայտչաձևերի կարևորությունը մեր կյանքը բացատրելու, նկարագրելու գործում, ինչպես նաև մեր հասարակությունների սոցիալական, քաղաքական, տնտեսական և այլ անարդարությունների մասին բարձրաձայնելու գործում: մի կապ որ այժմ հաճախ է անտեսվում: Մեր նպատակն է տեղեկացնել հանրությանը մշակութային գործիչների կողմից տարածաշրջանում հանդիպող խնդիրների մասին ինչպես նաև նրանց գործունեության կարևորության մասին՝ մեր անձնական, սոցիալական ու քաղաքական դերերի ապակառուցման ու վերանայման գործում:

Հարակից տարածաշրջանները

Մեր կենտրոնացումը Հարավային Կովկասի վրա բացատրվում է մեր հետաքրքրությամբ, երեք պետությունների Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի պատմական փորձառությամբ վերջին դարում: Այնուամենայնիվ CaucasusTalks-մտադրություն ունի ներգրավվելու մասնագետների հարակից տարածաշրջաններից՝ ընդլայնելով իր ներկայությունը դեպի Հյուսիսային Կովկաս, Թուրքիա և Իրան: Հարավային Կովկասի սոցիալական, քաղաքական ու մշակութային սերտ կապվածությունը իր հարևան տարածաշրջանների հետ ակնառու է ճամփորդների, ովքեր այցելու են տարածաշրջանն ու հարակից տարածքներում ու հատկապես բացահայտ դրանց հետազոտողների համար: Պատմական ու ժամանակակից զարգացումները Թուրքիայում, Ռուսաստանում, Իրանում ու այլուր միշտ ուղիղ ազդեցություն է ունեցել և շարունակում ունենալ տարածաշրջանի վրա և այս փոխկապվածությունն է մեր տարբեր տարածաշրջաններից խոսնակներ հրավիրելու հետաքրքրության պատճառը:

Դիալոգի սկզբունքները

Չկա մեկը, ով գիտի ամեն ինչ

Մենք որդեգրել ենք մի հայեցակարգ ըստ որի գիտելիքը պատկերվում է որպես շարունակաբար ընդլայնվող ու փոխակերպով: Այսպիսով, բոլորը տիրապետում են սահամանափակ քանակի գիտելիք՝ ինչպես այլոց այնպես էլ իրենք իրենց մասին: Մեր հարթակը առաջնորդվում է այս սկզբունքով և զգտում է ներգրավել հնարավորինս շատ գիտելիքահեն մտեցումներ նույնատիպ երևույթների վերաբերյալ, որպեսզի օգնի բոլորիս ընդլայնել մեր գիտելիքն ու պատկերացումները: Այլ կարծիքներ լսելու կարողությունը համագործակցային մթնոլորտ ստեղծելու լավագույն ճանապարհն է:

Խոսե՛լ, թե չխոսե՛լ

Մենք կողմնակից ենք մարդկանց ազատությանը արտահայտելու իրենց կարծիքն ու կիսվելու իրենց փորձառություններով: Բոլոր մարդիկ ունեն որոշակի նախապաշարմունքներ ու քննադատական կարծիքներ այլոց մասին, դրա համար մենք ձգտում ենք նման երևույթները ուղղորդել ազոնիզմի՝ կոնֆլիկտային իրավիճակից դրական արդյունքներ ստանալու հնարավորության: Այնուամենայնիվ, ատելության խոսքն ու խտրական խոսքը չեն հանդուրժվի մեր կողմից, քանզի դրանք հաճախ հանգեցնում կամ վատթարացնում են հոգեբանական ու ֆիզիկական ճնշումը: Ի հավելումս, մենք հավատում ենք որ անվերապահ վստահությամբ ասված խոսքը հավասար է գիտելիքահեն խոսքին: Անձի կարծիքն ու խոսքը գնահատվում են դրանք բովանդակության և ոչ ասվելու ձևի համար:

Լսել դիմացինին

Մարդիկ հաճախ շրջապատված են որոշակի դիսկուրսներով և նախընտրում են դրանց ստեղծած նորմատիվ կոմֆորտի զոնան չլքել: Նման ինֆորմացիոն ու նորմատիվ

մեկուսացումից դուրս գալու ցանկությունը բավարար է տարբեր կարծիք ունեցող մարդկանց լսելու համար և առաջին քայլն է դեպի խաղաղ համակեցություն: Այլ կարծիքներ լսելը չի պարտադրում համաձայնվել դրանց հետ, բայց նշանակում է հարգել ու հաշվի առնել այլոց կարծիքներն ու արժեքները:

Դելիբերատիվ ժողովրդավարություն

Դելիբերատիվ ժողովրդավարության գաղափարը ենթադրում է քաղաքականության մասին տեղեկասված ու ընդունվող որոշումներից իրազեկված քաղաքացիներ, ովքեր կարող են ակտիվ մասնակցել քաղաքական դեբատներում ու օրենքների ընդունման ընթացքում: Ժողովրդավարության այս մոդելը հակադրվում է ներկայացուցչական ժողովրդավարության մոդելին, ըստ որի քաղաքացիները ընտրում են իրենց ներկայացուցիչներին բայց քիչ մասնակցություն են ունենում քաղաքական որոշումների կայացման մեջ: Մենք նպատակ ունենք մեր հարթակում ներառելու դելիբերատիվ ժողովրդավարության բաղադրիչներ, վերջինս էլ իր հերթին նպատակ ունի միավորել տարբեր էթնիկ նկարագիր ունեցող մարդկանց միասին թափանցիկ ու ներառական եղանակով քննարկելու ընդհանուր ինդիքները: Մենք հույս ունենք, որ դելիբերատիվ ժողովրդավարության մոդելը կարող է տարածվել Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջաններում:

Մեր տեսլականը

Մեր ամենամեծ նպատակն է հարգալից ու կշռադատված խոսքի ու քննարկումների միջոցով ապահովության ու բարեկեցության զգալի բերել Յարավային Կովկասի ժողովուրդների կյանք: Մենք երևակայում ենք տարածաշրջան որտեղ ինդիվիդուալիզմն ու կոմունալիզմն կարող են գոյություն ունենալ համերաշխության մեջ, տարածաշրջան որտեղ մենք ազատ ենք ինքնարտահայտվել և նվիրվել մեր ստեղծագործականությանը, և զգալ մասը այն համայնքի, որտեղ համագործակցությունը և ոչ թե մրցակցությունն է համարվում գլխավոր արժեք:

Մենք հատկապես ակնկալում ենք ստանալ երիտասարդ սերունդերի աջակցությունը, ովքեր արդեն ունեն սահմաններից վեր մտածելու կարողություն և ցանկություն ունեն համագործակցելու մեզ հետ: Բայց մենք նաև մեծ ձգտում ունենք լսելի դառնալու նրանց համար, ովքեր պետականության սահմանափակումների մեջ են և կարողանալ փոփոխություն բերել իրենց կյանք:

Մեր նպատակն է անդրադառնալ վերը նշված խնդիրներին որպես մեկ ընդհանուր խնդիր, ելնելով մեր ընդհանուր աշխարհագրությունից, մշակութից, մարդաբանական, սոցիալ-տնտեսական ժառանգությունից: Այսպիսով, այս հարթակը ոչ միայն նախատեսում է բերել փոփոխություն երկխոսելու մեթոդաբանության տեսանկյունից և լուծումներ տալ որոշակի խնդիրների, այլև նշված խնդիրների լուծման համար առաջ քաշել անդր-տարածաշրջանային մոտեցումներ: Վերջինս կիրականացվի համեմատական և համատեղ իրականացված վերլուծության և միջսահմանային փոխգործակցության միջոցով, որը կտարրալուծի պետականության փոքրամտությունը:

Մեր հարթակը նաև բաց է ներգրավելու ու համագործակցելու այլ նախաձեռնությունների ու հարթակների հետ, որոնք գործում են ամբողջ աշխարհով մեկ և ովքեր կիսում են մեր տարածաշրջանային մոտեցումները: